ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/30-1

ք. Երևան «14» 04 2021թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Հնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2 981 200 (երկու միլիոն ինը հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1⊡1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՍՊԸ
Հ/Հ 900011001352	Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 01548908
Գլխավոր քարտուղար՝	
_____Վ. Օհանյան	տնօրեն_____Տ. Գարիբյան
(ստորագրություն)	/ստորագրություն/Կ.Տ
Կ.Տ	

Հավելված N 1
«14» 04 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/30-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հերթերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	30192710/1	Սոսնձամատիտ գրասենյակային	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Glue Stick	Տես Հավելված 1.1	հատ	130	52 000	400	Ք.Երևան, Դավիթաշենի 4, Ա.Միկոյան 109/8	400	2021թ 2-րդ եռամսյակ
2	30192160/1	Շտրիխներ	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Correction	Տես Հավելված 1.1	հատ	130	26 000	200		200	2021թ 2-րդ եռամսյակ
6	30192230/1	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն երկկողմանի	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Packing Tape	Տես Հավելված 1.1	հատ	280	14 000	50		50	2021թ 2-րդ եռամսյակ
10	22811160/1	Նոթատետր	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Note Book	Տես Հավելված 1.1	հատ	155	31 000	200		200	2021թ 2-րդ եռամսյակ
11	22811180/1	Նոթատետր կոշտ կազմով	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Note Book	Տես Հավելված 1.1	հատ	650	65 000	100		100	2021թ 2-րդ եռամսյակ
12	30197231/1	Թղթապանակ ֆայլ	AL PASSO GENERAL TRADING CO.LLC File	Տես Հավելված 1.1	հատ	55	55 000	10 000		10 000	2021թ 2-րդ եռամսյակ
13	30197234/1	Թղթապանակ կոշտ կազմով A4	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Box File	Տես Հավելված 1.1	հատ	450	225 000	500		500	2021թ 2-րդ եռամսյակ
17	30192100/1	Ռետին հասարակ	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Eraser	Տես Հավելված 1.1	հատ	80	16 000	200		200	2021թ 2-րդ եռամսյակ
18	30192114/1	Թանաք կնիքի բարձիկի համար	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Stamp pad ink	Տես Հավելված 1.1	հատ	160	3 200	20		20	2021թ 2-րդ եռամսյակ
20	30197622/1	Թուղթ A4	Captain Ինթերնեյշնլ փեյփր	Տես Հավելված 1.1	կգ	536	1 179 200	2 200		2 200	2021թ 2-րդ եռամսյակ
21	30199420/1	Սոսնձվածքով թուղթ նշումների համար	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Memo Paper	Տես Հավելված 1.1	տուփ	120	48 000	400		400	2021թ 2-րդ եռամսյակ
24	30197322/1	Կարիչ 20-50 թերթի համար	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Stapler	Տես Հավելված 1.1	հատ	1450	290 000	200		200	2021թ 2-րդ եռամսյակ
25	39241141/1	Դանակ գրասենյակային	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Cutter	Տես Հավելված 1.1	հատ	80	12 000	150		150	2021թ 2-րդ եռամսյակ
26	30192133/1	Սրիչներ	AL PASSO GENERAL	Տես Հավելված 1.1	հատ	200	40 000	200		200	2021թ 2-րդ

			TRADING CO.LLC								եռամսյակ
27	30197100/1	Կարիչի մեփաղալարե կապեր մեծ	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Staples	Տես Հավելված 1.1	տուփ	380	5 700	15		15	2021թ 2-րդ եռամսյակ
28	30197112/1	Կարիչի մեփաղալարե կապեր միջին	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Staples	Տես Հավելված 1.1	տուփ	75	37 500	500		500	2021թ 2-րդ եռամսյակ
29	30141200/1	Հաշվեսարք գրասենյակային	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Calcul Machin	Տես Հավելված 1.1	հատ	4000	40 000	10		10	2021թ 2-րդ եռամսյակ
30	39292150/1	Գծագրական գործիքներ /Քանոն փայտյա/	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Ruller	Տես Հավելված 1.1	հատ	80	16 000	200		200	2021թ 2-րդ եռամսյակ
32	39241210/1	Մկրատ գրասենյակային	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Scissors	Տես Հավելված 1.1	հատ	220	22 000	100		100	2021թ 2-րդ եռամսյակ
33	30193200/1	Փաստաթղթերի համար նախատեսված սեղանի վրա դրվող դարակաշարեր	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Desk Tray	Տես Հավելված 1.1	հատ	2000	60 000	30		30	2021թ 2-րդ եռամսյակ
34	39292110/1	Գրատախտակ	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Whiteboard	Տես Հավելված 1.1	լրակազմ	35000	350 000	10		10	2021թ 2-րդ եռամսյակ
37	30192122/1	Գրիչ ինքնահոս	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Pen	Տես Հավելված 1.1	հատ	40	200 000	5 000		5 000	2021թ 2-րդ եռամսյակ
39	30192720/1	Գծանշիչ	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Marker	Տես Հավելված 1.1	հատ	170	170 000	1 000		1 000	2021թ 2-րդ եռամսյակ
40	37821130/1	Գունավոր մատիտներ	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Pencil	Տես Հավելված 1.1	տուփ	180	3 600	20		20	2021թ 2-րդ եռամսյակ
41	30192130/1	Մատիտներ	AL PASSO GENERAL TRADING CO.LLC Pa\encil	Տես Հավելված 1.1	հատ	25	20 000	800		800	2021թ 2-րդ եռամսյակ

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ԳՆՈՐԴ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____Վ. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՍՊԸ
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908

տնօրեն----------Տ. Դավիթյան
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 1.1
« 14 » 04 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/30-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Գնման առարկայի անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	Սոսնձամատիտ գրասենյակային	Գլանաձև, պլաստմասե փաթեթավորմամբ, ստորին հատվածում սոսնձամատիտի բարձրությունը կարգավորող պտուտակով, սոսնձի բաղադրությունը PVP, առանց հոտի, նախատեսված թուղթ, ստվարաթուղթ, գործվածքներ և լուսանկարներ սոսնձելու համար: Սոսնձի գլանակի բարձրությունը առնվազն 7սմ, տրամագիծը առնվազն 2սմ: Քաշը՝ 20-22գր:
2	Շտրիխներ	«Retype» կամ համարժեք տեսակի, վրձինով, արագ չորացող, 20 մլ-անոց պլաստիկ փաթեթավորմամբ:
6	Դակիչ միջին / (ծակոտիչ)	Երկանցք, ծակոտիչ գրասենյակային՝ առնվազն 40 թերթ դակելու համար, քանոնով, պատյանը մետաղական, անցքերի տրամագիծը՝ 5.5մմ:
10	Նոթատետր	Նոթատետր գրասենյակային, զսպանակով (евроспираль), A5, 128x203 մմ, առնվազն՝ 58 գ/մ², սպիտակեցումը առնվազն՝ 96%, տպագրության տեսակը՝ օֆսեթ №1, առնվազն 70 թերթ, տողանի:
11	Նոթատետր կոշտ կազմով	A5 ձևաչափով (17x24սմ) ամենօրյա գրառումների գրքույկ՝ տարվա 12 ամիսներով և օրերով, կաշվե կազմով, կազմը եզրակարված, թվային բաժանիչներով, 2021թ.:
12	Թղթապանակ ֆայլ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորությամբ:
13	Թղթապանակ, կոշտ կազմով A4	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, տեղադրվող մետաղյա հարմարանքով, երկօղականի, PVC ծածկույթով ձևաչափի թղթերի համար, կողային հաստությունը 6-8 սմ:
17	Ռետին հասարակ	Ուղղանկյուն տեսքով փափուկ ռետին, բնական կաուչուկից, անհատական փաթեթավորմամբ, սև գրաֆիտային գրվածքների, չոր պաստելների և թանաքը մաքրելու համար: Չափսերը՝ առնվազն 31x45x12մմ (լայնություն X երկարություն X հաստություն):
18	Թանաք կնիքի բարձիկի համար	Կնիքի թանաք ջրային հիմքով Գույնը՝ կապույտ, 22լ ծավալն առնվազն 30 մլ: Շիշն ունի չափաբաժանիչ, որի շնորհիվ թանաքը լցվում է բարձիկին անհրաժեշտ քանակությամբ:
20	Թուղթ A4 ֆորմատի	Չևաչափը A4 (210-297 մմ), չկավճած թուղթ, խտությունն առնվազն 80գ/մ², սպիտակությունն առնվազն 140-150 +/- 3%, նախատեսված միակողմանի և երկկողմանի տպագրության համար: Գործարանային փաթեթավորմամբ, յուրաքանչյուր տուփում 500 թերթ:
21	Թուղթ նշումների համար սոսնձվածքով	Չափսը՝ 76X102մմ, գունավոր, եզրը սոսնձվածքով ամրացված, կպչուն, չափսի թույլատրելի շեղումը 2%, թղթերի քանակը՝ առնվազն 100 հատ:
24	Կարիչ 20-50 թերթի համար	20-50 թերթ կարելու համար մետաղյա իրանով և բռնակով՝ №24/6-26/6, գույնը՝մոխրագույն կամ սև:
25	Դանակ գրասենյակային / մետաղյա	Պլաստմասե կաղապարով, 14-15սմ երկարությամբ, 1,5-2սմ լայնությամբ, շեղբը մետաղյա, երկարության կարգավորման հնարավորությամբ:
26	Սրիչներ	Մետաղյա իրանով և սրիչով, մեկ անցքով, գրաֆիտե մատիտներ սրելու համար:
27	Կարիչի մետաղալարե կապեր մեծ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ №23/6, 23/8, 23/10, 23/13 համամասնորեն, տուփի մեջ 1000 հատ:
28	Կարիչի մետաղալարե կապեր միջին	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ №24/6, №26/6 համամասնորեն, տուփի մեջ 1000 հատ:
29	Հաշվասարք, գրասենյակային	Հաշվասարք, գրասենյակային 14 նիշ, սեղանի, գործողությունների ցուցադրման վահանակը թեքված, պլաստիկե ստեղներ, «00» և «000» մուտքագրման ստեղներ, թվային նշանի փոխանակման գործողություն, վերջին մուտքագրված նշանի հեռացման հնարավորություն, 158x203x31մմ +/-1սմ չափերով: Սնուցման 2 աղբյուր, ինքնալիցքավորվող:
30	Գծագրական գործիքներ / Քանոն փայտյա	Ուղիղ փայտյա քանոն՝ գծաբաժանումները ՝ միլիմետրային և սանտիմետրային, երկարությունը 30սմ:
32	Մկրատ գրասենյակային	Չժանգոտվող պողպատե շեղբերով, շեղբերը՝ երկկողմանի սրված: Բռնակները պլաստմասե, էրգոնոմիկ, ռետինե ներքին ծածկույթով, 160-170 մմ երկարությամբ: Նախատեսված՝ թուղթ, ստվարաթուղթ, գործվածք կտրելու համար:
33	Փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշարեր	Թղթադիր, նախատեսված A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար, մետաղյա հորիզոնական ցանցե 3 դարակներով, մետաղյա եռանկյունաձև իրանով, գույնը՝ սև:

34	Գրատախտակ	Գրատախտակ՝ մագնիսական, մարկերով, ջնջոցով, տակդիրով, երկկողմանի, ալյումինե շրջանակով: Գույնը՝ սպիտակ: Չափը՝ 90սմ x 150 սմ:
37	Գրիչ ինքնահոս	Պլաստիկե թափանցիկ կաղապարով, արտաքին դեկորը՝ համապատասխան թանաքի գույնի, տեսակը՝ գնդիկավոր, գրելու տողի հաստությունը՝ առնվազն 0,7 մմ: Գույներ՝ մուգ կապույտ՝ 70%-ը, սև՝ 20%-ը, կարմիր՝ 10%-ը:
39	Գծանշիչ	Տարբեր գույների՝ ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից, տափակ ծայրոցով, Flamingo 1-5 մմ կամ համարժեք: Արտադրության տարեթիվը՝ 2021 թվականից ոչ շուտ:
40	Գունավոր մատիտներ	Փայտյա, 6 տարբեր գույների, սրած, տուփում 6 մատիտ:
41	Մատիտներ / գրաֆիտե միջուկով, հասարակ	Սև գրաֆիտե միջուկով փայտյա մատիտ HB2, ռետինով: Փաթեթավորումը տուփերով, տուփի մեջ 12 հատ:

ԳՆՈՐԴ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____Վ. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՍՊԸ
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908

տնօրեն----------Տ. Ղարիբյան
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 2
«14» 04 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/30-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30192710/1	Սոսնձամատիտ գրասենյակային	-	-	-	28 600	28 600	28 600	39 000	39 000	39 000	52 000	52 000	52 000	52 000
2	30192160/1	Շտրիխներ	-	-	-	14 300	14 300	14 300	19 500	19 500	19 500	26 000	26 000	26 000	26 000
6	30192230/1	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն երկկողմանի	-	-	-	7 700	7 700	7 700	10 500	10 500	10 500	14 000	14 000	14 000	14 000
10	22811160/1	Նոթատետր	-	-	-	17 050	17 050	17 050	23 250	23 250	23 250	31 000	31 000	31 000	31 000
11	22811180/1	Նոթատետր կոշտ կազմով	-	-	-	35 750	35 750	35 750	48 750	48 750	48 750	65 000	65 000	65 000	65 000
12	30197231/1	Թղթապանակ ֆայլ	-	-	-	30 250	30 250	30 250	41 250	41 250	41 250	55 000	55 000	55 000	55 000

13	30197234/1	Թղթապանակ կոշտ կապմամբ A4	-	-	-	3 135	22 000	6 600	159 500	26 400	648 560	1 760	8 800	123 750	4 275	30 000	9 000
17	30192100/1	Ռետին հասարակ	-	-	-	3 135	22 000	6 600	159 500	26 400	648 560	1 760	8 800	123 750	4 275	30 000	9 000
18	30192114/1	Թանաք կնիքի բարձիկի համար	-	-	-	3 135	22 000	6 600	159 500	26 400	648 560	1 760	8 800	123 750	4 275	30 000	9 000
20	30197622/1	Թուղթ A4	-	-	-	217 500	36 000	884 400	2 400	12 000	168 750	5 700	40 000	12 000	290 000	48 000	1 179 200
21	30199420/1	Սոսնձվածքով թուղթ նշումների համար	-	-	-	217 500	36 000	884 400	2 400	12 000	168 750	5 700	40 000	12 000	290 000	48 000	1 179 200
24	30197322/1	Կարիչ 20-50 թերթի համար	-	-	-	217 500	36 000	884 400	2 400	12 000	168 750	5 700	40 000	12 000	290 000	48 000	1 179 200
25	39241141/1	Դանակ գրասենյակային	-	-	-	159 500	26 400	648 560	1 760	8 800	123 750	5 700	40 000	12 000	290 000	48 000	1 179 200
26	30192133/1	Սրիչներ	-	-	-	22 000	6 600	159 500	26 400	648 560	1 760	8 800	123 750	5 700	40 000	12 000	290 000
27	30197100/1	Կարիչի մեխոտպարե կապեր մեծ	-	-	-	3 135	22 000	6 600	159 500	26 400	648 560	1 760	8 800	123 750	5 700	40 000	12 000

28	30197112/1	Կարիչի մետաղալարե կապեր միջին	-	-	-	20 625	20 625	20 625	28 125	28 125	28 125	37 500	37 500	37 500	37 500
29	30141200/1	Հաշվեսարք գրասենյակային	-	-	-	22 000	22 000	22 000	30 000	30 000	30 000	40 000	40 000	40 000	40 000
30	39292150/1	Գծագրական գործիքներ /Քանոն փայտյա/	-	-	-	8 800	8 800	8 800	12 000	12 000	12 000	16 000	16 000	16 000	16 000
32	39241210/1	Մկրատ գրասենյակային	-	-	-	12 100	12 100	12 100	16 500	16 500	16 500	22 000	22 000	22 000	22 000
33	30193200/1	Փաստաթղթերի համար նախատեսված սեղանի վրա դրվող դարակաշարեր	-	-	-	33 000	33 000	33 000	45 000	45 000	45 000	60 000	60 000	60 000	60 000
34	39292110/1	Գրատախտակ	-	-	-	192 500	192 500	192 500	262 500	262 500	262 500	350 000	350 000	350 000	350 000
37	30192122/1	Գրիչ ինքնահոս	-	-	-	110 000	110 000	110 000	150 000	150 000	150 000	200 000	200 000	200 000	200 000
39	30192720/1	Գծանշիչ	-	-	-	93 500	93 500	93 500	127 500	127 500	127 500	170 000	170 000	170 000	170 000
40	37821130/1	Գունավոր մատիտներ	-	-	-	1 980	1 980	1 980	2 700	2 700	2 700	3 600	3 600	3 600	3 600

41	30192130/1	Մատիտներ	-	-	-	11 000	11 000	11 000	15 000	15 000	15 000	20 000	20 000	20 000	20 000
		Ընդամենը՝	-			**1 639 660**			**2 235 900**			**2 981 200**			**2 981 200**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողական կարգով:

ԳՆՈՐԴ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____ Վ. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110
«Հայբիզնեսբանկ» ՍՊԸ
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908

տնօրեն----------Տ. Ղարիբյան
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 3
« 14 » 04 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/30-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« 14 » 04 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/30-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն